ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 փետրվարի 2015 թվականի N 16 -Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով ու 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 2015 թվականի փետրվարի 5-ին գնդակոծության հետևանքով զոհված Ներքին Կարմիր Աղբյուր գյուղի բնակիչ Վանիկ Գուրգենի Ղուկասյանի ընտանիքին հատկացնել միանվագ դրամական օգնություն 500 000 / հինգ հարյուր հազար/ դրամի չափով:

2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս.Դավթյանին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով կատարել գումարի վճարումը զոհվածի որդու՝ Արսեն Վանիկի Ղուկասյանի անունով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ. փետրվարի 9
ք. Իջևան